№ 138 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 1894 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 № 138

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կօպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹՒԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ „ՄՇԱԿ“ 23-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 րուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը 2 ր., մի ամսվանը՝ 1 րուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագիրներ Թիւրքաց Հայաստանի մասին.— Գիւղական կառավարութեան վերակազմութիւնը. Մինչև որ գեավուրները կռւում են.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Новости» լրագրի Կ. Պօլսի թղթակցութիւնը. Մի բացատրութիւն. Սովեալների օգտին. Նամակ Ղզլարից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց կառավարութեան շրջաբերականը եւրոպական պետութիւններին. Ֆէրդինանդ Լէսէպս. Լուրեր Կ. Պօլսից. Նամակ Թիւրքիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հեռագրով)

Մեր թղթակիցը հեռագրում է մեզ Պետերբուրգից, Նոյեմբերի 26-ից հետեւեալը.

„Нов. Время“ լրագրին հեռագրում են, որ անգլօ-հայկական ընկերութիւնը մշակում է այն աղերսագրի բնագիրը, որ պէտք է ուղարկվի պետութիւնների դեսպաններին։

„Հայաստանում կատարվող անցքերի առիթով Լոնդօնում շատերը ցանկութիւն յայտնեցին ստորագրել աղերսագիրը։ Մտադրութիւն կայ դիմել հասարակութեանը և միջոցներ խնդրել՝ հայկական ագիտացիան զարգացնելու համար“։

Նոյեմբերի 27-ից մեր թղթակիցը հեռագրում է մեզ Պետերբուրգից հետեւեալը.

„Պետերբուրգի „Нов. Время“ լրագրին երէկ Լօնդօնից հեռագրեցին, որ սուլթանը խնդրեց ամերիկական դեսպանին Միացեալ-Նահանգների մի ագենտ ուղարկել Հայաստան։

„Այսօր Լօնդօնի հայկական ընկերութեան նախագահը մի ադրէս մատուցեց պետութիւնների ներկայացուցիչներին՝ միջնորդելով պաշտպան հանդիսանալ Թիւրքաց հայերին։

„Աւստրիական ազդեցիկ շրջանները վախեցած են Անգլիայի միջամտութիւնից, տեսնելով դրա մէջ անգլօ-ռուսական բարեկամութիւն։ Աւստրիան և գերմանիան կը հրաժարվեն միանալ Անգլիայի հետ։

„Լօնդօնի „Times“ լրագիրը ենթադրում է, որ բրիտանական կառավարութիւնը վճռել է եռանդուն կերպով գործել հայկական հարցում, և կառաջարկի պետութիւններին միաբան գործել և ստիպել, որ իրագործվի Բերլինի դաշնագիրը։ Վերյիշեալ լրագիրը տպագրեց բրիտանական, ֆրանսիական և այլ լրագիրների հաղորդած տեղեկութիւնները։

Պետերբուրգի „Новости“ լրագիրը երէկ, մի առաջնորդող յօդուածում, խօսում է անգլօ-ռուսական բարեկամութեան դէմ, ասելով թէ բաւական է, ինչ որ Ռուսաստանը անձնուէր քաջագործութիւններ կատարեց յօգուտ Անգլիայի և Աւստրիայի. ժամանակ է մտածել և իր մասին։ Լրագիրն ասում է, որ հայերը, Թիւրքիայի բաժան բաժան լինելու ժամանակ, կը ստանան իրանց մասը և կապրեն իրանց ինքնուրոյն կեանքով. ուրեմն բնական ընթացքը շտապեցնելու կարիք չը կայ։ Լրագրի կարծիքով Ռուսաստանը ինչու պէտք է միջամտի հայկական հարցում, երբ ոչ Բօլգարիայում, ոչ Դարդանէլում, ոչ Եգիպտոսում յարաբերութիւնները չը բարւոքվեցին ոչ յօգուտ Ռուսաստանի, ոչ Ֆրանսիայի։

„Պետերբուրգի „Биржевыя Вѣдомости“ լրագիրը, մի առաջնորդող յօդուածում, ասում է, որ սուլթանը յայտնեց բրիտանական դեսպանին, թէ Թիւրքաց իշխանութիւնների գործողութիւնները վերաստուգող օտարազգու հանդէս գալը վայր կը գցէ գահի պրէստիժը և առաջ կը բերէ հայերի մէջ վտանգաւոր յուզմունք։ Սուլթանը խնդրում է հաւատալ իր խօսքին, որ կը կատարվի անկողմնապահ քննութիւն։ Լրագիրը հաւանութիւն է տալիս պետութիւնների միջամտութեանը, մանաւանդ Ռուսաստանի, որը որպէս ամենահին մահմեդական կարգերի փոփոխողներից արեւելքում, աւելի մօտ ծանօթ է Հայաստանի գործերի հետ։ Հայերը վայելում են Ռուսաստանում հաւասար իրաւունքներ, հասնելով բարօրութեան, պատւի և յարգանքի ամենաբարձր աստիճաններին։“

ԳԻՒՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ներքին գործերի մինիստրութեան դըծագրած վերանորոգութեան պրօեկտների շարքում, գլխաւոր տեղերից մէկը բռնում է գիւղական հասարակական կառավարութեան վերակազմութեան խնդիրը։

Ինչպէս յայտնի է, Ալէքսանդր II կայսրի վերանորոգութեան բարիքները տարածվեցին և գիւղական դասակարգի վրա։ Գիւղացիները նորանոր իրաւունքներ ստացան և յատկապէս նրանց ներքին կառավարութեան համար, թէ վարչական և թէ դատաստանական մասերում, հրատարակվեց առանձին օրէնք, որ կոչվում է „գիւղական կառավարութեան Պօլօժենիա“։

1862 թւից մինչև այժմ գիւղական հասարակութիւնները կառավարվում են այդ օրէնքներով։ Այժմ մինիստրութիւնը որոշել է վերանորոգել այդ օրէնքները և այդ նպատակով հարցրել է բոլոր նահանգապետների կարծիքը։ Այդ դիմումը եղել է և Անդրկովկասի բոլոր նահանգապետներին, որից երեւում է, որ մտադրված վերանորոգութիւնը պէտք է տարածվի և մեր երկրի գիւղական հասարակութիւնների վրա։

Անկասկած, դա մի խոշոր իրողութիւն է, մի նշանաւոր հարց մեր երկրի ազգաբնակութեան համար, որի ամենագլխաւոր մասը կազմում են գիւղացիները։ Գիւղական դասակարգի կառավարութեան խնդիրը, իբրև մի ամենաէական և լուրջ խնդիր, պէտք է գրաւի մեր մամուլի, հասարակութեան բարեկեցութեան մասին մտածող ինտէլլիգէնտ դասակարգի ուշադրութիւնը, որոնք պէտք է աշխատեն իրանց դիտողութիւններով, ուսումնասիրութեամբ և ցուցմունքներով նպաստել գիւղական կառավարութեան օրէնքների վերանորոգութեան գործին, համաձայն կեանքի և տեղական պահանջների։

Մեր երկրի գիւղական ազգաբնակութիւնը կառավարվում է այն օրէնքներով, որ շընորհված է նրան կովկասի նախկին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի օրով։ Այդ օրէնքը խմբագրված է բաւական լայն և մարդասէր սկզբունքներով. գիւղացիները իրանք ընտրում են իրանց տանուտէրերին և ունեն իրանց սեփական շինական դատարանը, որ բաղկացած է երեք ընտրովի անձերից, որոնք և քննում, վճռում են բոլոր այն դատերը և վէճերը, որոնք ծագում են գիւղացիների մէջ։ Այդ օրէնքը հրատարակվել է 1867 թւին։

Անշուշտ, այժմ 27 տարվայ պրակտիկան պարզել է այն բոլոր պակասութիւնները, անյարմարութիւնները, օգտակար և վնասակար կողմերը, որոնք նկատվել են այդ օրէնքի մէջ, նրա գոյութեան ընթացքում։ Անկասկած, ընտրողական սկզբունքը շինական կառավարութեան մէջ պէտք է անձեռնմխելի պահել. դա ամենաարդար սկզբունքն է, որի վրա դրված է շինական վարչութեան և արդարադատութեան գործը, երբ թէ տանուտէրը և թէ շինական դատաւորները ընտրվում են հասարակութեան ձեռքով։ Բայց թէ դրանց գործունէութեան և իրաւասութեան մէջ ինչ պակասութիւններ կան,—ահա այն հարցը, որ այժմ պէտք է ուշադրութեան առնվի։

Բանիմաց, գործին և գիւղական կեանքին մօտ ծանօթ անձինք մեծ ծառայութիւն արած կը լինեն՝ ուսումնասիրելով այդ հարցը, նիւթեր հայթայթելով, որից օգուտ կարող են քաղել այն մասնաժողովները, որոնք այս դեկտեմբերից սկսած պէտք է կազմվեն նահանգական քաղաքներում, նահանգապետների նախագահութեամբ և որոնք պէտք է մշակեն գիւղական կառավարութեան օրէնքի պրօեկտները։ Այդ պրօեկտները պէտք է ներկայացվեն մինիստրութեան մինչև 1895 թ. մայիսի 1-ը։

Հրաւիրում ենք մեր երկրի ինտէլլիգէնցիային լուրջ ուշադրութիւն դարձնել այդ խնդրի վրա։

ՄԻՆՉԵՒ ՈՐ ԳԵԱՎՈՒՐՆԵՐԸ ԿՌՒՈՒՄ ԵՆ ..

«Մինչև որ գեավուրները կռւում են, մենք կարող ենք հանգիստ քնել»։ Այդ ասացուածը մի անգամ դուրս թռաւ Ֆուադ-փաշայի բերանից, պետական մի գործիչի, որին Թիւրք հասարակութիւնը իմաստութեան պսակով էր պսակել։

«Եւրոպական պետութիւնների շահասէր և եսամօլ մրցութիւնը միմեանց մէջ ստեղծեց Թիւրքիայի համար մի բացառական դրութիւն. ինչքան էլ ազդու առաջարկութիւններ անէր այս կամ այն պետութիւնը, Բ. Դուռը քմծիծաղ էր տալիս միայն, շատ լաւ հասկանալով, որ վերջ ի վերջոյ նա, Ֆուադ փաշայի մտքով, հանգիստ կարող է քնել…

«Մինչև անգամ պատերազմի դէպքում՝ Որքան էլ թշնամին ջարդէր Թիւրքաց զօրքերը, սուլթանը և նրա խորհրդատուները գիտէին, որ խաղաղութեան դաշն կապելու հարցը կանցնի եւրոպական պետութիւնների քննութեանը, որոնց անխուսափելի մրցութիւնը իսկոյն երեւան կը գայ և հէնց դրանով Թիւրքիայի համար հնարաւորութիւն կը ստեղծի՝ շարունակելու իր հանգիստ գոյութիւնը։

«Պետութիւնների այդ մրցմամբ միայն կարելի է բացատրել Հայաստանում կատարվող այն մի շարք խայտառակութիւնները, որոնք, Բերլինի դաշնագրի իմաստով, տեղի չը պէտք է ունենային, բայց որոնք այնու ամենայնիւ պարբերաբար տեղի են ունենում, XX դարու շէմքի վրա մի ամօթալի երես կազմելով Եւրոպայի պատմութեան մէջ։

«Մեր ընթերցողները արդէն ծանօթ են ասիական այն անգթութիւնների հետ, որոնց մէջ Լօնդօնի հայկական ընկերութիւնը մեղադրում է Թիւրք ադմինիստրացիային, քիւրդերին և զօրքերին։ Մազերը բիզ բիզ են կանգնում, երբ մարդ կարդում է այն գազանութիւնների նկարագրութիւնները, որոնք տեղի են ունենում օր ցերեկով բազմաչարչար Հայաստանում։ Այդ նկարագրութեան արած տպաւորութիւնը այնքան զօրեղ է, որ Թիւրքաց կառավարութիւնը հարկաւոր համարեց, չը սպասելով նախատինքներին, քննիչ յանձնաժողով ուղարկել։

«Եւրոպական հասարակութիւնը այնքան լաւ ծանօթ է Բ. Դրան անկողմնապահութեանը և Թիւրքաց ռայաներին վերաբերեալ տիրող կարգերին, որ մի վայրկեան անգամ չէր կասկածում, թէ անմիջապէս կերեւան Բ. Դրան հերքումները։ Հերքումը, յիրաւի, անյապաղ երեւաց, և ի հարկէ, ամբողջ մեղքը, ինչպէս և պէտք էր սպասել, ընկնում է հայերի գլխին։

«Հերքումը պնդում է, որ Թիւրքաց գազանութիւնների մասին հաղորդած տեղեկութիւնները չափազանցրած են, մինչև անգամ աւելի ես—որ նրանք կատարելապէս սուտ են։ Որ քիւրդերը չեն յարձակվել հայերի վրա, այլ ընդհակառակն։ Risum teneatis…

«Կարծում ենք մինչև անգամ «պատրաստականցիք» գիտեն, որ քիւրդերը վայրենի, պատերազմական ցեղ են, որոնք կողոպուտներով են ապրում և միշտ ոտից մինչև գլուխ զինաւորված են, այն ինչ հայերը, բազմադարեան լծի շնորհով, դարձան խաղաղ երկրագործներ և առեւտրականներ, որոնք աւելի երկչոտ են, քան թէ քաջ, զիջող, քան թէ անհնազանդ ..

«Ու ահա այսպիսի մարդկանց է Թիւրքաց հերքումը ստիպում յարձակվել ի բնէ արիւնարբու մարդասպանների վրա։ Ահ, որպիսի հին, որպիսի փտած միջոց է, որ գործ է դրվում մի բան միայն գրած լինելու համար, և որը կատարելապէս բաւական էր այն ժամանակ, երբ գոյութիւն ունէր պետութիւնների մրցութիւնը։

«Չը կայ այլ ևս Եւրոպա», բացականչեց մի անգամ կոմս Բէյստը։ Չը կայ այլ ևս Եւրոպա միաբան, շաղկապված ընդհանուր մարդասիրական նպատակներով։ Չը կայ, բայց վաղուց արդէն ժամանակ է, որ նա լինի։ Մի այդպիսի Եւրոպայի ժամանակ Բ. Դուռը չէր համարձակվի բաւականանալ ծաղրի արժանի հերքումներով։ Նա կըստիպէր գեղծումներն արմատախիլ անել, իսկ եթէ դրա համար անընդունակ գտնվէր, այն ժամանակ պարտաւոր կը լինէր այդ դէպքում զիջանել իր տեղը միջազգային գործադիր էկզէկուցիային, որը և կը հաստատէր կարգը ամուր հիմքերի վրա։

«Այժմ այնքան շատ են խօսում ռուս-անգլիական բարեկամութեան մասին, որ հայերը կարող են յոյսեր տածել քրիստոնեայ պետութիւնների պաշտպանութեան վրա։ Բաւական է, որ Ռուսատանը, Անգլիան և Ֆրանսիան բարձրացնեն իրանց ձայնը յօգուտ հայերի, և Բ. Դուռը ստիպված կը լինի զիջանել։ Գերմանիան, Իտալիան և Աւստրիան հաւանօրէն կը միանային պետութիւնների մի այդպիսի քայլին, մանաւանդ որ ոչինչ փոփոխութիւն տեղի չէր ունենայ Եւրօպայի քարտէզի վրա։

«Դա ճշմարիտ որ մի բարի գործ կը լինէր, բղխած բացառապէս մարդասիրական զգացմունքներից։ Փրկել միլիոնաւոր հայերին ոչ ոքին չը ցանկալի գաղանութիւններից—դա պետութիւնների խաղաղասիրութեան և միաբանութեան մի արժանաւոր գործ կը լինէր, որով գոնէ մի յայտնի չափով կը քաւվէր նրանց մրցութեան տխուր հետևանքը։»

«Одесск. Листокъ».

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«НОВОСТИ» ԼՐԱԳՐԻ Կ. ՊՈԼՍԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգի մեր թղթակցի հեռագրից մեր ընթերցողները արդէն ծանօթ են «Новости» լրագրի նոյեմբերի 22-ի համարում տպած Կ. Պօլսի թղթակցութեան մի քանի կէտերին։ Առաջ ենք բերում այդ թղթակցութեան միւս մանրամասնութիւնները։

«Ասում են, որ Վանի անգլիական փոխ-հիւպատոս Հօլվարդը սպանվել է, բայց անգլիական դեսպանութիւնը այդ մասին ոչ մի տեղեկութիւն չունի։ Լուրերին նայելով, Վանում անկարգութիւններ են պատահել։ Ռուսական հողի վրա, Օլտիի կողմից, յարձակումն է եղել. ռուսական իշխանութիւնը, իր կողմից, նախազգուշական միջոցներ է ձեռք առել և այդ բանը ցոյց է տալիս, որ սահմանակից թիւրքական նահանգներում գործերի դրութիւնը վտանգաւոր է։

«Սպասում են նոյնպէս, որ մինիստրական մարմնի մէջ փոփոխութիւններ կը լինեն։

«Այդ բոլոր լուրերը մի բան են ցոյց տալիս, որ հայկական գործերի առիթով հասարակական տրամադրութիւնը վերին աստիճանի լարված է։ Թիւրքական մանաժողովը, որին յանձնված է քննել Վանի անգլիական փոխ-հիւպատոսի գործողութիւնները, որին Դուռը մեղադրում է հայերին դէպի ապստամբութիւն գրգռելու մէջ, ճանապարհ ընկաւ նոյեմբերի 12-ին։ Սըր Ֆիլիպ Կէրրի մատաղիր է ուղարկել Վան Չէրմզայդ գնդապետին, անգլիական դեսպանատան զինուորական կցորդին։

«Վանի անգլիական փոխ-հիւպատոսի հետ պատահած դէպքը մի քիչ սառեցրեց Թիւրքիայի և Անգլիայի յարաբերութիւնները ճիշդ այն րոպէին, երբ Մինիր-փաշան պատրաստվում էր գնալ Անգլիա՝ Վիկտորիա թագուհուն մատուցանելու սուլթանի կողմից «Իմթիազ» յայտնի շքանշանը, որ զարդարված է շքեղ ադամանդներով։

«Այս վերջին օրերս տարածված լուրերի շարքին պէտք է կցել և այն, որ դիտաւորութիւն կայ Շաքիր-փաշային Բիթլիսի ընդհանուր նահանգապետ նշանակել՝ այժմեան նահանգապետ Թաքսին-փաշայի տեղ։

«Կ. Պօլսում և գաւառներում տիրապետող մտքերի յուզումը ազդել է և հայոց պատրիարքի տեղապահի վրա։ Վախենալով որ իրան սպանելու փորձեր կը լինեն հայերի կողմից, նա հրաժարվել է պատասխանատու պարտաւորութիւնները կատարելուց և յայտնել է, թէ կառավարութեան վերջին հրամանագիրը պատրիարքի ընտրութեան մասին, թոյլ չէ տալիս գումարել ազգային ժողով օրինաւոր պայմանների մէջ։ Դուռը ստիպված է այդ դժուարութիւնը ևս հարթել»։

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

«Գիւղատնտեսական տեղական ընկերութիւններ» վերնագրով մեր յօդուածը, որ տպագրվել է «Մշակի» 129-րդ համարում, որքան իմացանք, մեր երկրի գիւղատնտեսական գործին համակրող անձանց մէջ տարաձայնութիւնների առիթ է տուել։ Ընկերութիւն բառը շատերը կօմպանիա հասկանալով, ներկայումս մեր երկրում անիրագործելի են համարել դրա գոյութիւնը. ուրիշները ընկերութիւնը մի տեսակ ակցիօներական միութիւն են կարծել, որը նոյնպէս գիւղատնտեսական ձեռնարկութիւնների մէջ անիրագործելի են գտել. մի քանիսը նրան համարել են զուտ տեսական-գիտական մի ընկերութիւն և այլն։

Որքան դուրեկան չէ, որ այս առաջարկը թիւրիմացութիւնների պատճառ է դարձել, նոյնքան և ուրախալի է, որ մեր արծարծած խնդիրը անուշադիր չէ մնացել մեր երկրի տնտեսական վիճակով հետաքրքրվող անձանց կողմից, այլ այդ հարցի առիթով եղել են խօսակցութիւններ, վէճեր։ Դա ապացոյց է, որ այդ նիւթը մօտ է մեր հասարակութեան մի մասի ցանկութիւններին. իսկ թէ դրա առիթով տարաձայնութիւններ են առաջացել, դա դժուար չէ ցրվել, պարզաբանելով խնդիրը։

Մեր առաջարկած գիւղատնտեսական-նահանգական ընկերութիւնը թէ իր ծրագրով և թէ նպատակներով նոյնն է, ինչ որ Գերմանիայում ամենատարածված «Örtlicher landwirtschaftlicher Verein» ծրագիրը, միայն թէ բնականաբար աւելի սահմանափակ գործունէութեամբ։ Այդ տեղական գիւղատնտեսական ընկերութիւնը երկու գլխաւոր նպատակ ունի. մէկը հաստատել կապ այն բոլոր ինտելիգէնտ անձանց մէջ, որոնք կամ իրանց պարապմունքով և կամ ստացած մասնագիտական ուսմամբ կապված են երկրի արդիւնաբերութեան և արդիւնահանութեան հետ, և ապա այդ կապի կամ միմեանց հետ ունեցած յարաբերութիւնների և ծանօթութիւնների շնորհիւ նիւթական օգուտ քաղեն թէ իրանք՝ ընկերութեան անդամները և թէ օգտաւէտ լինել կարողանան որպէս երկրին, նոյնպէս և նրա արդիւնաբերող ազգաբնակութեանը։

Այդպիսի ընկերութիւնները կազմակերպվում են մի երկրի արդիւնաբերող ույժերի նախաձեռնութեամբ և մասնաւոր միջոցներով՝ առանց կառավարութեան ուղղակի աջակցութեան, սակայն նրա թոյլտուութեամբ։

Այդպիսի ընկերութիւնների միահամուռ նախաձեռնութեամբ կազմվում են մասնաւոր գաւառական կամ նահանգական փոքրիկ ցուցահանդէսներ՝ տեղական արդիւնաբերական նիւթերից, որով թէ արդիւնաբերողն է օգտվում գրաւելով սպառողների կամ գնողների մի ստուար կօնտինգէնտ, և թէ գնող կամ տեսնող հասարակութիւնն է օգտվում, լաւ մթերքներ ձեռք բերելով կամ հէնց դրանց հետ ծանօթանալով։

Բացի դրանից, ընկերութեան անդամները բոլոր տեղերումն էլ, իրանց առևտրական յարաբերութիւնների ժամանակ՝ միջոց են ունենում անհամեմատ աւելի էժան գնով ձեռք բերել զանազան գործարաններից թէ գիւղատնտեսական մեքենաներ և թէ իրանց ձեռնարկութեանը հարկաւոր ուրիշ պարագաներ։ Միւս կողմից ընկերութեան անդամները միանալով միմեանց և ուրիշ արդիւնահանող ընկերութիւնների հետ՝ միջոց են ունենում իրանց արդիւնքները աւելի հեշտութեամբ վաճառել։

Եթէ այդպիսի ընկերութիւնների նիւթական միջոցները, շնորհիւ անդամակցական վճարների, մասնաւոր նպաստների և իրանց ընդհանուր ձեռնարկութիւններից ստացած գումարների մեծանում են, այն դէպքում նրանք բնականաբար ընդարձակում են իրանց գործունէութեան ծաւալը, տպագրում են ժողովրդական դիւրըմբռնելի հրատարակութիւններ, տարածում են ժողովրդի մէջ գիւղատնտեսական զանազան օգտաւէտ գիտելիքներ, պահում են իրանց սեփական թերթերը, հիմնում են փորձնական ագարակներ, օդերևոյթաբանական և քիմիական կայարաններ, պահում են շրջող մասնագէտներ և անասնաբուժներ, օգնում դրամով իրանց կարօտեալ անդամներին, տեղ և պաշտօն են գտնում նրանց համար և այլն և այլն։

Անդամների փոխադարձ յարաբերութիւնները աջողեցնելու համար կազմում են տարեկան մի երկու անգամ ընդհանուր ժողովներ, ընտրում են տեղական և կենտրօնական վարչութիւններ, որոնք որպէս պաշտօնական մարմիններ՝ վարում են ընկերութեան գործերը և յարաբերութիւնների մէջ են մտնում տեղական կառավարութեան հետ ընկերութեան նպատակների համար։

Գալով կառավարութեանը, նա միշտ համակրութեամբ է վերաբերվում դէպի այդպիսի ընկերութիւնների գործունէութիւնը, որովհետև դա ուղղված է լինում յօգուտ երկրի և ժողովրդի տնտեսական առաջադիմութեան։

Ինչպէս տեսնում ենք, այս ձևով և նպատակով կազմած ընկերութիւնը օգտաւէտ է որպէս ընկերութեան անդամների սեփական շահերի, նոյնպէս և ժողովրդի և կառավարութեան համար։

Մի այդպիսի տեղական նահանգական ընկերութեան կամ միութեան կազմելը թէ ժամանակայարմար է և թէ օգտաւէտ, եթէ մինչև անգամ նա սկզբում չը կարողանայ իր ծրագիրների բոլոր կէտերը իրագործել, որովհետև շուտով մեր երկրում բացվելու են երկաթուղային գծեր, որոնց շնորհիւ մեր երկրի արդիւնաբերութիւնը կը պահանջի աւելի համբերաշխ, միացեալ ույժեր և գործունէութիւն մեր կողմից, քան այդ մինչև այժմս է եղել։

Այդ իսկ ծրագրով, մի քանի գիւղատնտեսների աջակցութեամբ, մշակում ենք մի կանոնադրութիւն, որը կազմելուց և կառավարութեան կողմից հաստատվելուց յետոյ, կարելի կը լինի գիւղատնտեսների ընդհանուր ժողով հրաւիրել,—գուցէ նոյն իսկ Երևանում։

Գիւղատնտես՝ Ա. Աթանասեանց

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Թիւրքաց Հայաստանի, և Երևանի ու Կարսի նահանգների սովեալների օգտին.

1) Ջիվանշիրի գաւառի Առաջաձոր ու Գանձասարու վանք գիւղերի մէջ, Ալէքսանդր Շահիջանեանի ձեռքով հանգանակած՝ 11 րուբլի։

2) Վաթսունականից՝ 50 րուբլի։

Ուրեմն նախկին 758 րուբլի 39 կոպէկի հետ այժմ ունենք ընդամենը 819 րուբլի 39 կոպէկ։

Այսօր, նոյեմբերի 26-ին, յանձնեցինք Բարեգործական ընկերութեան Թիֆլիսի խորհրդին 100 րուբլի, սովեալներին նպաստելու համար։

Մեզ մօտ մնաց 719 րուբլի 39 կոպ.։

Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 9338 ր. 21 կ.։

Ուղարկել ենք 8619 րուբլի։

ՆԱՄԱԿ ՂԶԼԱՐԻՑ

Նոյեմբերի 15-ին

Շատ յաճախ մեր լրագրութեան մէջ լսվում են իրաւացի գանգատներ, թէ գաւառական թղթակիցները գրեթէ միշտ երէցփոխական, քահանայական ու հոգաբարձական ընտրութիւնների ու վէճերի նկարագրութիւններով են զբաղվում։ Սակայն ինչ արած, որ մի քանի դէպքերում անհնարին է բարձի թողի անել երէցփոխական, հոգաբարձական և այլ այսպիսի ընտրութիւններ և մանաւանդ այդ բոլոր հռչակաւոր ընտրութիւններից առաջ կատարված հաշուետուութիւնները—մի բան, «որ երազական եղել է այսօր իրօք և խօսքով, ոչինչ աւելի... քան թէ անխորհուրդ անուն դառնալով»։

Այս խօսքերը մեզ ասեցնել են տալիս, ընդհանրապէս բոլոր գաւառական քաղաքներում և մասնաւորապէս Ղզլարում երբեմն երբեմն տեղի ունեցող հաշուետուութիւնները—ամենից յաճախ երէցփոխական հաշիւները, որոնց մի վերստուգիչ մասնաժողովի քննութեան ենթարկելու կարևորութեան մասին անցեալներում առիթ ենք ունեցել խօսելու «Մշակի» մէջ։

Ահաւասիկ այդպիսի ժողովների անվրէպ պատկերը։ Երէցփոխը կարդում է մանրամասն հաշիւ, հաւաքված հասարակութիւնը լսում է բառեր ու թւեր. երէցփոխը վերջացնում է, մի կարճ պաուզա յաջորդում է նրա հաշուին և ապա, վերջերս մեր կեանքում շատ տարածված տիպական քարտուղարը արդէն պատրաստ ունի մի փառաւոր արձանագրութիւն։ «Մենք, ի ներքոյ ստորագրեալներս, այս ինչ եկեղեցու ծխականներս»—ահա այն բառերը, որոնցով սովորաբար սկսվում են այդպիսի արձանագրութիւնները,—«լսեցինք, կարդացինք, ստուգեցինք և յամենայնի հաշիւները գտանք ճիշդ, ուղիղ և սուրբ, ուստի և վաւերացնելով այս հաշիւը՝ յայտնում ենք մեր սրտաբուղխ շնորհակալութիւնը երէցփոխ այս ինչին»։

Լսվում է անկիւններից մի երկու ձայն. «մասնաժողով ընտրենք, պարոններ, և թող այդ վերստուգիչ մասնաժողովը հաշիւները քննէ ու մեզ զեկուցումն ներկայացնէ»։ Բայց ծով է ականջ դընում այդ ձայներին, դրանք միայն մնում են ձայներ։—Մեզ չէ զարմացնում այս վերջին հանգամանքը. դա նորութիւն չէ, որ հասկացող մարդկանց այդպիսի խելացի առաջարկութիւնները ամենից շուտ խեղդվում և «ձայն բարբառոյ յանապատի» են մնում։ Միայն մի բանում մենք մեզ չենք կարողանում հաշիւ տալ—ինչու վերստուգող մասնաժողով ընտրելու առաջարկութիւնը չը պէտք է անի հէնց հաշուետու անձնաւորութիւնը։ Հասարակական գործիչի համար մինչև մինչև այժմ դեռ էլի դժուարըմբռնելի է, հէնց իր պատուի տեսակէտից, հաշուետու մարմնի կարևորութիւնը։ Սակայն իրողութիւնը ցոյց է տալիս, որ հաշուետուներ չընտրելը և ընդհանրապէս հաշուետու մարմնի բացակայութիւնը մի պինդ արմատ, ըժիժ է դարձել գաւառական քաղաքներում։ Իր կոպէկների համար հայ վաճառականը ստացագիրներ ու ապահովագրեր է պահանջում, բայց երբ բանը գալիս է եկեղեցու և դպրոցի փողերին, նա ասում է. «Ես ձեզ հաւատում եմ, պարոն երէցփոխ, պարոն հոգաբարձու և մի րոպէ անգամ չեմ թոյլ տայ կասկած տանելու ձեր բացարձակ ազնւութեան վրա»։ Այլ և փակագծում նա ուզում է հասկացնել. «այդ ես անում եմ նրա համար, որ երբ ինքս կը լինեմ քո պաշտօնիդ մէջ, նոյնը անես և դու»։ Մինչև օրս, ինչպէս մեզ հաւատացնում են շատերը, Ղզլարում ոչ մի հաշիւ, լինի դա երէցփոխական, թէ հոգաբարձական, հաշուետուների քննութեան չէ ենթարկվել։

Այդ կողմից ամսիս 12-ին կայացած ժողովը երէցփոխական հաշիւները տեսնելու և նոր երէցփոխ ընտրելու համար մի խոշոր երևոյթ պէտք է համարել Ղզլարի կեանքում։ Այդ նիստում երկար վիճաբանութիւններից յետոյ վերջապէս որոշվեց մի մասնաժողով ընտրել 3 հոգուց բաղկացած, որը պէտք է ստուգէ Լուսաւորիչ եկեղեցու երէցփոխի յանձնված աւանդադրամների հաշիւը 86 թւից մինչև 94 թիւը։ Իբրև մի համակրելի երևոյթ արձանագրելով այս փաստը, ուրախութեամբ մենք պէտք է աւելացնենք այստեղ և այն, որ ժողովում ամենաանկեղծ կերպով բոլոր ծխականները հաւատացած էին այդ հաշիւների անսխալութեանը. աւելին կասենք, երէցփոխը, ինչպէս երևաց հաշուից, մի խոշոր գումար ծախսել է եկեղեցու վրա իր գրպանից։ Բայց կրկնում ենք, այստեղ սկզբունքի մասին է մեր խօսքը։

Կ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց ամենայն հայոց Կաթողիկոսի հեռագրին պատասխանել հետևեալը. «Ի Հոգի շնորհակալ եմ յաղագս բարեմաղթութեանց ինձ արտայայտելոց. յանձն առնեմ զՄեզ աղօթից Ձերոց»։ Այդ հեռագիրը պատասխան է հետևեալ հեռագրին, որ Նորին կայսերական Մեծութիւն կայսր Նիկոլայ II-ի գահակալութեան առիթով ամենայն հայոց Վեհափառ կաթողիկոսը ուղարկել է Լիվադիա, Թագաւոր կայսրին. «Ամենահաւատարիմ զգացմամբք լցեալք առ կայսերական ինքնակալ Գահոյսն հանուր Ռուսիոյ, ընդ Որոյ հովանաւորութեամբ յառաջադիմէ Եկեղեցիս Հայկական, համարիմ զիմ սրբազան պարտիս ածել առ Գահոյիւք Ձերդ կայսերական Մեծութեան զօրհնաբանական շնորհաւորութիւնս յաղագս Գահակալութեան Ձերոյ և մաղթեմք, զի Թագաւորն Երկնաւոր պարգևեսցէ Ձերդ Մեծութեան զերկարակեցութիւն և զբարօրութիւն և զօրացուսցէ Ամենակարող Հզօրն իւրով զՊետութիւնն Ռուսաց ի բարեբախտութիւն միլիօնաւոր հաւատարիմ հպատակաց համայն Ռուսիոյ»։

—

Շաբաթ օր, նոյեմբերի 26-ին, Թագաժառանգ Ցեսարևիչ Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչի անուանակոչութեան օրը, Սիօնի մայր եկեղեցում, Վանքի մայր եկեղեցում և բոլոր ուրիշ դաւանութիւնների տաճարներում մաղթանքներ կատարվեցին։ Այդ օրը դպրոցներում ուսում չը կար։ Քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսաւորութիւն կար։

—

Երէկ, նոյեմբերի 28-ին, հանգուցեալ Թագաւոր կայսր Ալէքսանդր III-ի մահվան քառասունքին, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեցին Սիօնի մայր եկեղեցում, ուր ներկայ էին քաղաքացիական և զինուորական բոլոր աստիճանաւորները, Վանքի մայր եկեղեցում և միւս դաւանութիւնների տաճարներում։

—

Թիֆլիսի նահանգական ազնուականութեան պարագլուխը, շնորհաւորելով Թագաժառանգ Ցեսաըսվիչի անուանակոչութիւնը, բաղդ ունեցաւ Նորին Բարձրութիւնից ստանալ հետեւեալ հեռագիրը. «Սրտանց շնորհակալ եմ Թիֆլիսի ազնուականութիւնից և ձեզանից՝ շնորհաւորութեան համար»։

—

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետեւ ճանապարհ է ընկել Պետերբուրգից նոյեմբերի 26-ին և սպասվում է Թիֆլիսում դեկտեմբերի 7-ին։

—

Մեր թղթակիցը Պարսկաստանի Ռաշտ քաղաքից մեզ գրում է հետեւեալը. «Այստեղի հայոց եկեղեցում, հոկտեմբերի 23-ին, հոգեհանգիստ կատարվեց հանգուցեալ Ալեքսանդր III կայսրի յիշատակին։ Հոգեհանգստին ներկայ էին անգլիական հիւպատոսը, ռուսաց հիւպատոսի տեղապահը, և զանազան պարսիկ պաշտօնեաներ։ Հոգեհանգստի ժամանակ դամբանական ճառեր ասեցին ֆրանսերէն, ռուսերէն, հայերէն և պարսկերէն լեզուներով»։

—

«Հայրենիք» լրագրում կարդում ենք. «Սիսի Մկրտիչ կաթողիկոսը Պատրիարքարանին ծանուցեր է թէ իր առողջական վիճակը բաւական լաւացած է, և թէ իրան տեղապահ կարգած է Նորընծայ ձեռնասունը Խորէն վարդապետ, որուն պաշտօնին հաստատութեան հրամանագիրը Բ. Դուռէն ստանալով Հալէպ իրան ղրկել խնդրած է։ Սակայն պատրիարքարանէն կը գիտուի թէ տեղապահ մը կը նշանակուի, երբ աթոռը թափուր մնայ, կամ կաթողիկոսը ալ բոլորովին անգործութեան դատապարտուի. այդ պարագային մէջ պատրիարքարանը կը կարգէ տեղապահ մը։ Հետեւաբար պատրիարքարանը անհետեւանք թողլով Մկրտիչ կաթողիկոսի առաջարկը, որոշած է փութացնել Աբրահամ եպիսկոպոսին առաքումը»։

—

Մենք ստացանք Բագուից, պ. Առաքել Ծատուրեանից 70 րուբլի, «Մշակի» 1895 թւի եօթ օրինակի վճարը։ Դրանցից 5 օրինակ նուիրատուի կողմից պէտք է ուղարկենք հետեւեալ տեղերը. 1) Տաթեւի վանքին, 2) Բռնակոթ գիւղի հայոց դպրոցին, 3) Քարահունջ գիւղի հայոց դպրոցին, 4) Գեօրիսի հայոց դպրոցին և 5) Բագու, Ա. Ծատուրեանին։ Մնացած երկու օրինակը թողնված է մեր խմբագրութեան տրամադրութեան տակ։ Մենք որոշեցինք այդ երկու օրինակը ուղարկել՝ մէկը Ժընեվի ուսանողների գրադարանին, և միւսը՝ Պետերբուրգի անտառային ինստիտուտի ուսանողներին։

—

Եւրոպական Ռուսաստանում դեռ շարունակվում է խոլերան։ Նամանաւանդ սաստիկ է Պոդոլեան նահանգում։ Մի շաբաթվայ ընթացքում, հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 5-ը, հիւանդացել են 475 և մեռել են 202 հոգի։

—

Այսօր, երեքշաբթի, նոյեմբերի 29-ին, կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում, Ա. Կլաուսէնը կը կարդայ զեկուցում Պետերբուրգում նորերս տեղի ունեցած միջազգային մրցահանդէսի մասին։ Կարող են ներկայ լինել և կողմնակի անձինք։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ ռուսաց արդիւնաբերութիւնը և առեւտուրը խրախուսող ընկերութիւնը կրկին հարց է բարձրացնում՝ ռուսաց ապրանքների նմուշների շարժական ցուցահանդէսներ կազմել Պարսկաստանում և այդ ցուցահանդէսներումն էլ ռուսաց ապրանքների պատուէրներն ընդունել։

—

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ անդրկովկասեան երկաթուղու գլխաւոր նշանակվում է ինժեներ Պուշչենկօվ։

—

ՕԴԷՍԱՅԻՑ մեզ գրում են. «Ուշադրութեան արժանի փոփոխութիւն է տեղի ունենում Օդէսայի հայ կօլօնիայի տրամադրութեան մէջ։ Մինչև այժմ անտարբեր և անմասնակից մեր հասարակական գործերին, այստեղի հայերը այժմ փոքր առ փոքր սկսել են հետաքրքրութիւն ցոյց տալ, ուշադրութեամբ հետևել հասարակական գործերին»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Նկարիչ Բաշինջաղեանի ցուցահանդէսը բացվեց երկուշաբթի օրվանից։ Պատկերահանդէսը լաւ տպաւորութիւն է թողնում։ Առ այժմ յաճախողները շատ չեն»։

—

ՋԻՎԱՆՇԻՐԻ գաւառի Կուսապատ գիւղից մեզ գրում են. «Այս օրերս մեր գիւղում վախճանվեց մի կին Աթաբէկեանների տոհմից, որի թաղմանը ներկայ էր իր ազգական, դատաստանական քննիչ Նիկոլայ Աթաբէկեանց։ Պատարագին երգում էր պետական երկդասեան դպրոցի երգեցիկ խումբը. մերձակայ գիւղերից եկել էին մօտ տասը քահանաներ և շատ գիւղացիներ։ Պատարագից յետոյ պ. Աթաբէկեանց, ի յիշատակ հանգուցեալի, մի քանի նուէրներ արեց եկեղեցուն և բացի դրանից նուիրեց պետական դպրոցին մի կտոր գետին, երկու դեսեատին մեծութեամբ, որտեղ աշակերտները այգեպանութիւն պէտք է սովորեն»։

—

ՀԱՄԱՄԼԻ գիւղից մեզ գրում են. «Մեր դըպրոցի հոգաբարձութեան և թեմական տեսուչ Բենիկ արեղայի մէջ տեղի ունեցան անախորժ ընդհարումներ։ Արեղան հեռացաւ գիւղից, շատ վատ տպաւորութիւն թողնելով հասարակութեան վրա»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Թիւրքաց կառավարութիւնը իր դեսպանների միջոցով հետեւեալ պաշտօնական շրջաբերականն է ուղարկել օտար պետութիւններին՝ Թիւրքահայոց շարժումների առիթով։

«Ապստամբութեան երկու գլխաւոր նախաձեռնողները, Տամատեան և Համբարձում, սկսել էին յեղափոխական պրօպագանդան Տալւորիկ գիւղի մէջ։ Տամատեան, Կ. Պոլսի բժշկական դպրոցի նախկին աշակերտը, մասնակից էր այն անկարգութիւններին, որոնց ժամանակ հայերը քիչ էր մընացել սպանէին իրանց պատրիարք Աշըգեանին։ Հալածվելով այդ բանի համար, Տամատեան փախաւ Աթէնք, այդտեղից անցաւ Ժընեվ։ Ալեքսանդրէտում, Սիրիայում, նա ափ իջաւ կեղծ անունով։ Այդտեղից Տամատեան ուղեւորվեց Տալւորիկ, Հալէպի և Դիարբէքիրի վրայով, որտեղ և կալանաւորվեց։

«Նրան փոխարինեց Համբարձումը, որ գրգռում էր հայերին կոտորել բոլոր մուսուլմաններին, յարձակվել Մուշ քաղաքի վրա և գրաւել այնտեղի պահեստներում գտնված զէնքերը։ Երկու ագիտատօրները իրանց եւրոպացիների տեղ էին ցոյց տալիս և հաւատացնում էին հայ գիւղացիներին, որ նրանց օգնութիւն կը հասցնեն Եւրոպայից օդապարիկներով։ Մի քանի տասնեակ գիւղերի ժողովուրդը ապստամբվեց. ապստամբների հրոսակները զինաւորվեցին բերդանկաներով, ամեն տեսակ սիստէմի հին հրացաններով, թրերով, կացիններով և այլն։ Այդ հրոսակները յարձակվեցին նախ դելիկեան քիւրդ ցեղի վրա. սպանելով մի քանի մարդիկ և կողոպտելով բնակարանները, նրանք շարժվեցին էկրան և եադիղեան ցեղերի դէմ։

«Ապստամբները մի շարք սարսափելի գազանութիւններ գործեցին, բռնաբարեցին և սպանեցին կանանց, հանեցին մարդկանց աչքեր, կտրեցին ականջներ, տարածեցին սպառնալիքներ կառավարութեան դէմ, աղաղակելով. «կեցցէ մեր թագաւորը»։ Այդպիսի անգթութիւններ գործեցին Գուէնլուգուզան և երկու ուրիշ գիւղերում, որոնց այրեցին իրանց ճանապարհի վրա։ Բիթլիսի վալիի և Էրզրումի 4-րդ զօրագնդի հրամանատարների հրամանով, վերջապէս զօրք ուղարկվեց այդ հրոսակների դէմ։

«Ապստամբները մասամբ ոչնչացել են, մասամբ փախել. դեռ մինչև այժմ ճիշդ տեղեկութիւններ չեն ստացված երկու կողմի սպանվածների և վիրաւորվածների թւի մասին։ Գիզիլ-Քիլիսէի քահանայ Մկրտիչը և նրա համախոհներից մի քանիսը, որոնք, իրանց սեփական խոստովանութեամբ, գրգռել են ժողովուրդը ապստամբութեան և օգնել են Տամատեանին և Համբարձումին, ձերբակալվել են և ուղարկվել Մուշ, դատարանին յանձնելու համար։

«Բայց բոլոր այն կանայք և երեխաները, որոնք թաքնվել էին սարերում, քարայրերում և այլն, յետ են բերվել իրանց գիւղերը և կարգը վերականգնած է»։

«Զարմանալի է սակայն, ասում է «Новости» լրագիրը, որ օսմանեան կառավարութիւնը իր ժամանակին չը հաղորդեց Եւրոպային այդ դէպքերը, որից յետոյ անցել է աւելի քան երկու ամիս։ Հայ լրագիրները, ի հարկէ, դրականապէս հերքում են թիւրքաց կառավարութեան հաղորդած այդ տեղեկութիւնները։ Ցանկալի էր, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրող մեծ պետութիւնների ներկայացուցիչներից մի մասնաժողով կազմվէր և տեղն ու տեղը քննէր գործը»։

ՖԷՐԴԻՆԱՆԴ ԼԷՍԷՊՍ

Հեռագիրը արդէն հաղորդեց Ֆէրդինանդ Լէսէպսի մահը, որ տեղի է ունեցել Պարիզում։

Ֆէրդինանդ Լէսէպս, ֆրանսիացի հռչակաւոր ինժեները և ակադեմիայի անդամը, ծնվեց Վէրսալում 1805 թւին, ուրեմն նա 90 տարեկան էր։ Նա սկզբում, այն է 1825 թւից, իր գործունէութիւնը նուիրեց քաղաքագիտութեանը, և փոխ-հիւպատոսի ու հիւպատոսի պաշտօններ վարեց զանազան երկրներում՝ Լիսաբօնում, Տունիսում, Կայիրէում և այլն։

Սակայն նրա իսկական կոչումը քաղաքագիտութիւնը չէր, չը նայելով որ դիպլօմատիայի մէջ էլ բաւական աջողութիւն ունէր։ Լէսէպսի իսկական կոչումը ինժեներութիւնն էր, որին նուիրեց իր գործունէութիւնը և որի շնորհիվ հռչակվեց որպէս աշխարհիս ամենանշանաւոր ինժեներներից մէկը։ Լէսէպս թողնելով դիպլօմատիական ծառայութիւնը, 1854 թւի նոյեմբերին գնաց Եգիպտոս, ուր հրաւիրեց նրան Եգիպտոսի փոխարքայ Մուհամէդ-Սաիդ փաշան։ Ահա այդտեղ Սաիդ-փաշայի հետ Ալէքսանդրիայից մինչև Կայիրէ ճանապարհորդութիւն կատարելու ժամանակ, Լիբէքի անապատների միջով, նրա գլխում յղացաւ Սուէզի ջրանցք անցկացնելու գաղափարը, որը և հաղորդեց փոխարքային։ Սաիդ-փաշան, յափշտակվելով այդ մտքով, խնդրեց նրանից մի յիշատակագիր ներկայացնել այդ հարցի առիթով։ Լէսէպս գրեց իր նշանաւոր գըրուածքը «Percement de l'isthme de Suez» վերնագրով, որի մէջ մանրամասն մշակված է Սուէզի ջրանցք անցկացնելու մանրամասնութիւնը, և ներկայացրեց փոխարքային։

Լէսէպսի ձեռնարկութեանը նպաստում էին ոչ միայն Եգիպտոսի փոխարքան, այլ և բազմաթիւ ազդեցիկ անձեր թէ Ֆրանսիայում, թէ Իտալիայում և թէ Գերմանիայում։ 1856 թւին նրան յանձնեցին վերահսկել ջրանցք անցկացնելու աշխատանքների վրա. և 1859 թւին նա ձեռնարկեց գործին, յաղթելով Անգլիայի կողմից յարուցած բոլոր արգելքներին և հաւաքելով Ֆրանսիայում 200 միլիօն ֆրանկ։ Ջրանցքի շինութիւնը աւարտվեց 1869 թւին։

Սակայն հռչակաւոր Լէսէպսի ծերութիւնը և կեանքի վերջին տարիները դառնացան Պանամայի ջրանցք անցկացնելու ձեռնարկութեան կատարեալ անաջողութեան պատճառով, որի մանրամասնութիւնները յայտնի են մեր ընթերցողներին Պանամայի խայտառակութիւնների պատմութիւնից։

ԼՈՒՐԵՐ Կ. ՊՕԼՍԻՑ

Կ. Պօլսի մեր թղթակիցը մեզ հաղորդում է հետեւեալ տեղեկութիւնները.

«Այստեղի լրագրութեան մէջ տպագրվեց հետեւեալը. «Պատրիարքարանէն գրուեցաւ թաղական խորհուրդներու որ անցագրի համար վկայական տրուած անձերու անուններուն հետ նշանակուին անոնց կերպարանքին մանրամասնութիւնները, ըրած գործերնին և ուրիշ տեղեկութիւններ»։

Պէտք է ասել, որ այդ յայտարարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ոստիկանական մի պաշտօն, որ յանձնված է պատրիարքին։

Էրզրումից գրում են. «Էրզրումի նահանգի մէջ այս տարուան հունձքը սովորական միջին քանակութեան հասած է, որով կը յուսանք, թէ պէտք չը պիտի մնայ օտար ալիւր ներածելու, և տեղական արտադրութիւնը բաւական պիտի ըլլայ մինչև նոր հունձքը։ Արմտիքի գիները, թէպէտև լաւ հունձքի տարիներուն բաղդատմամբ շատ բարձր են, բայց անցեալ տարուան գիներէն 40% պակաս են։ Աշնան ցանքերը կանոնաւորապէս կատարուեցան և հիմիկուհիմա գոհացուցիչ են»։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, նոյեմբերի 19-ին

Արդէն հաղորդեցի ձեզ այն պաշտօնական յայտարարութեան բովանդակութիւնը, որ կառավարութիւնը տպագրեց բոլոր թերթերուն մէջ Սասունի գործերուն նկատմամբ։

Թիւրք թերթերը այդ պաշտօնական յայտարարութեան առթիւ սկսած են այնպիսի չողոքորթութիւններ ընել, այնպիսի լեզու մը բանեցնել, որ նոյն իսկ անտարբեր մարդիկ չեն կրնար կարդալ առանց զզուանքի։

Գաղափար մը տալու համար, քանի մի քաղուածներ կընենք «Թարիգ» և «Սապահ» յայտնի թերթերի յօդուածներէն։

«Օսմանեան կառավարութիւնը, կը գրէ «Թարիգ», որուն արդարասիրութեան և գթառատ ողորմութեան շնորհիւ կը վայելենք անբաւ բարիքներ և անսահման հանգստութիւն, կէտ նպատակ ունի իր բոլոր հպատակներուն երջանկութիւնն ու հանգստութիւնը անվերջանալի ընել։ Ակներև է որ բոլոր իսլամ և քրիստոնեայ ժողովուրդները այս ճըշմարտութեան կը հաւատեն ամեն օր այս մասին իրենց յայտնած շնորհակալութիւններով։

«Օտար ազգերու նախանձը շարժելու աստիճան ժողովրդասէր եղող վեհ. սուլթանին նկատմամբ իր բոլոր օսմանցի հպատակներուն սէրն ու հաւատարմութիւնը քանիցս գրուած է եւրոպական բազմաթիւ լրագիրներու մէջ, և ասիկա՝ հաստատուած է Եւրոպայէն եկող ուղեւորներու կողմէ, ինչպէս և իրենց հրատարակած տետրակներով։ Երբ այսպէս բոլոր մարդկութիւնը կը վկայէ և կը հաստատէ, ահա քանի մը նենգաւոր, անդորրութեան և հանգստութեան թշնամի հայեր երեւան ելլելով, կը պնդեն որպէս թէ Սասունի մէջ օսմանեան զինուորներու կողմէ քանի մը հայ գիւղեր քանդուել են և այդ միջոցին ալ մարդասպանութիւն և այս կարգի բաներ պատահած են, որոնք բոլորն ալ սուտ և զրպարտութիւններ ըլլալով, հրատարակուած են եւրոպական թերթերու կողմէ։

«Այս հայերը իրենց այս ընթացքով ապացուցին թշնամի ըլլալնին երկրին և կրօնակիցներուն. ուրիշ բանի մը չը կրցան ծառայել։ Արդէն եւրոպական կառավարութիւններն ու ազգերը շատ լաւ գիտեն որ օսմանեան կառավարութեան ընթացքը արդարակորով և ժողովրդասէր է, և հետեւաբար վերոյիշեալ հայերը ծայրայեղ ցածութիւններն այն կողմերն ալ ապացուցած եղան։

«Ոչ մէկ տեղ կարեւորութիւն չը պիտի տրուի այս կարգի ծաղրելի և ծանծաղամիտ անձերու խօսքերուն և տեղեկատուութեանց։ Որքան որ ալ յայտնի է, թէ այս թշնամիներուն զրպարտական հրատարակութիւնները կարող չեն արատ մը բերել օսմ. պետութեան բարձր համբաւին, սակայն այսպէս ուշադրութեան արժանի դէպքի մը բացակայութեան ալ պարագային մէջ օտար մամուլը ընտայօդ լրերու արձագանք եղած ըլլալուն, անցեալ օր կառավարութեան կողմէ հերքուեցան։ Այսու հանդերձ խռովարարներուն ընթացքին վրա տեղեկութիւն քաղելու համար որոշուեցաւ ղրկել մասնախումբ մը։ Ահա այս որոշումն ալ մեր օսման. կառավարութեան արդարասիրութեան ապացոյցներէն մէկն է։»

Իսկ «Սապահ» ի միջի այլոց հետեւեալ տողերը կը գրէ. «Ցիրաւի ցաւալի կը գտնենք սա պարագան թէ մէկ քանի խռովարար հայեր կը խաբեն եւրոպական լրագիրները, որոնք տեղի հեռաւորութեան պատճառաւ չեն կրնար պէտք եղած կերպով ստուգել իրաց ճշմարիտ վիճակը։

«Կայսերական կառավարութիւնը, իր պարտականութեան բերմամբ, ուշադրութիւն կ'ընէ որպէս զի երկրին հեռաւոր թէ մօտաւոր ամեն կողմերուն մէջ խաղաղութիւնն ու ապահովութիւնը անվթար մնան։ Օրինակի համար, երբ Թալօրիի և ուրիշ կողմերու մէջ՝ խռովարարներէ թելադրըւած անձեր համարձակին խաղաղութիւնը վրդովել, այդ պարագային մէջ կայսերական կառավարութեան նուիրական պարտականութիւնն է՝ միւս հանդարտ և հաւատարիմ հպատակները պաշտպանելու և հանրային խաղաղութիւնն ու անդորրութիւնը պահպանելու համար՝ ըստ օրինի պատժել ու կարգի բերել այնպիսիները։ Արդարև, եթէ խաբուող մէկ քանի կարճամիտներ անպատիժ մնան, խռովարարները պիտի աւելցնեն իրենց խաբէութիւնները և, ինչպէս նշանակուած էր պաշտօնական յայտարարութեան մէջ, անպատիժ մնացած կարճամիտներ պիտի առաջնորդուին աւելի ցաւալի և անվայել ընթացքներու մէջ գտնուելու:

«Խռովարարները արդէն ի վաղուց անտի իրենց գործ ըրած են եւրոպական լրագիրներու մէջ տարբեր գոյնով ու տարբեր եղանակով հրատարակել տալ այն միջոցները, որոնք ձեռք կառնուին հանրային անդորրութիւնը անվթար պահելու համար: Կայսերական կառավարութիւնը մէկ կողմէ հերքելով այդ հրատարակութիւնները, որոնք միմիայն զրպարտութիւններ են, միւս կողմէ որոշած է հոն յանձնաժողով մը ղրկել, որպէս զի մանրազննին քննութիւններ կատարէ՝ խռովարարներու կողմէ խաբուելով խաղաղութիւնը վրդովելու ոճիրը գործող անձերու չարագործական ս բարքներու նկատմամբ:»

Ու այդ տեսակ յօդուածներ ամեն օր, ամեն ժամանակ կը տպագրուին Թիւրք լրագիրներու մէջ, առանց բոպէ մը անգամ մտածելու, որ ոչ ոք հաւատացող չը կայ:

Պ—ի.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԱԳՈՒ, 25 Նոյեմբերի: Այսօր երեկոյեան Պարսկաստանից Բագու հասաւ «Ցեսարեվիչ Ալէքսանդր» շոգենաւով պարսկական արտակարգ դեսպանութիւնը պարսից պրինցի գլխաւորութեամբ: Դեսպանութիւնը գնում է Պետերբուրգ:

ԿՐԱՍՆՕՅԱՐՍԿ, 25 նոյեմբերի: Այստեղ Նոր տարուց կը սկսի հրատարակվել «Ենիսէյ» անունով լրագիրը:

«Ալլէ» անունով ֆիրմայի գրքերը քննելուց յետոյ, որ մեղադրվում էր զօրքին անկանոն կերպով պաշար հայթայթելու մէջ, ոստիկանութիւնը կալանաւորեց Կամիլ Դրէյֆուսին, Նախկին պատգամաւորին և «Nation» լրագրի դիրեկտորին: Գրքում նշանակված է, որ Դրէյֆուսին տրված է 80.000 ֆրանկ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 նոյեմբերի: Այսօր Նոցա կայսերական Մեծութիւնները վերադարձան Ցարսկոե-Սէլօից Պետերբուրգ:

Թագուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնա և Մեծ իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնա ուղղափառ Պալեստինեան ընկերութեան պատւաւոր անդամների կոչում ընդունեցին:

Երէկ վախճանվեց Պետերբուրգի համալսարանի ակադէմիկոս և պրոֆէսոր Չէբիշէվ:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 25-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ	92 ր.	25 կ »
Բերլինի վրա 100 մարկ —	45 ր.	22 »
Պարիզի վրա 100 ֆրանկ —	36 »	62 »
Ոսկի — — արժէ	7 »	39 »
Մաքսային կուպօններ —	147 »	75 »
Արծաթ — — —	— »	— »
եբրային դիսկօնտ —	5 »	7 »
օՊտ. բանկի 5% տոմս 1 շրջանի	— »	— »
— — — — 2-րդ	— »	— »
— — — — 3-րդ	— »	— »
4% պետական րէնտա	95 »	25 »
5% ոսկեայ րէնտա 1884 թ.	159 »	— »
4½ ոսկեայ փոխառութիւն.	— »	— »
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	245 »	— »
— — երկրորդ —	220 »	— »
Պետական երկաթուղային րէնտա.	101 »	75 »
4½ րէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան	$95\frac{5}{8}$ »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — —	189 »	25 »
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101 »	25 »
4½% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	150 »	50 »
— — — թղթադ.	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	100 »	75 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100 »	50 »
Օդէսայի — —	100 »	25 »
Թիֆլիսի — —	97 »	75 »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	99 »	50 »
— — Քութայիսի —	99 »	— »

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

—

ԵՐԵՒԱՆ. Գ. Ղ. Միանգամայն համակրում ենք ձեր առաջարկութեան, բայց ցաւում ենք, որ խմբագրութիւնը, գէթ այժմ, միջոց չունի իրագործելու ձեր առաջարկը:

ՂՈՒԲԱ. Մ. Ս. Շնորհակալ ենք ձեր նամակների համար:

ՄՕՍԿՎԱ. Գ. Վ. Շատ ցաւում ենք, որ չենք կարող կատարել ձեր խնդիրքը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ՌՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. Ներքին, երեխաների և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին: Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ: (№ 72)

ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ը ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
ԱՇՈՏ ԵՐԿԱԹ
պատմական վէպի ԵՐԿՐՈՐԴ հատորը:

Երկու հատորի գինը մէկ ռուբլի, իսկ դեկտեմբերի 20-ից յետոյ 1 ր. 50 կոպէկ:

Դիմել՝ կենտրոնական գրավաճառանոցին, կամ հեղինակին՝ Тифлисъ. Эчміадзинская улица, № 20. БАГРАТУ АЙВАЗЯНЦУ.
(№ 37) 1—2

ՆԿԱՐԻՉ ԵՆՈՎՔ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Բացել է իր նկարների ցուցահանդէս, կալուածական բանկի շինութեան մէջ: Ցուցահանդէսը բաց է առաւօտեան 10—3 ժամը և երեկոյեան 5—10 ժամը:

ՄՈՒՏՔԸ 20 ԿՈՊԷԿ
Աշակերտների և երեխաների համար՝ 10 կ.
(№ 136) 2—3

Լոյս տեսաւ
ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ
ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ
Հարուստ ժամանակագրութեամբ
(Եօթներորդ տարի)
Գինն է 60 կոպ. ճանապարհածախսով 75 կ.
Բացված է բաժանորդագրութիւն
„ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ“
ժողովածուի Դ. և Ե. գրքերի համար. արժէն 3 ռուբլի:
ԳԻՒՏ ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ
(№ 135) 2—2

Շուտով լոյս կը տեսնի
Մանտեգացցայի
„ԲԱՂԴԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ“
Գինն է 80 կոպէկ.
Դիմել՝ Чрезъ Вагаршапатъ въ Сел. Гечрлу. старшему учителю Сарикяну. (№ 135) 2—5

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
1) «ԷՎԷԼԻՆԱ», էտիւդ, գինն, է . . 50 կոպ:
2) «ԱՅՍՏԵՂ ԵՒ ԱՅՆՏԵՂ», . . . 10 »
3) «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖ. ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ» . . . . . 25 »
4) Նոյնը գերմաներէն լեզուով . . 25 »
5) «DIE HUNGERSNOTH IN TURKISCHE ARMENIEN». . . . . . 20 »
Վաճառվում է «Մշակի» խմբագրատանը և Թիֆլիսի գրավաճառանոցներում:
(№ 127) 6—10

Նոյեմբերի 20-ից ստացվել է Պաստերի սիստեմով պատրաստած ԲՐՈՒՍԱՅԻ ԲՕԺՈԺԻ ՍՊԻՏԱԿ ՏԵՍԱԿԻ ՍԵՐՄԸ, որ արդէն անցեալ տարիներից յայտնի է կովկասում և Պարսկաստանում իր յատկութիւններով և տուած առատ բերքովը:

Սերմը ստացված է ուղղակի յայտնի "Էկօնոմիտես„ ֆիրմայից:

Գնել ցանկացողները կարող են դիմել՝ ԲԱԹՈՒՄ, ԹԻՖԼԻԶ, ԲԱԳՈՒ, Եղբ. Մնացականեաններին, իսկ ՆՈՒԽԻ՝ Աղայ Մուսայ Մահմեդովին:

Այս հասցէով, Бр. Мнацаканянцъ, Батумъ կամ Тифлисъ կամ Баку:
(№ 136) (շ. և.) 1—25

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԷՎԷԼԻՆԱ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻՒԴ
ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ա. ԴԱՍՏԱԿԵԱՆԻ
Հրատարակութիւն „Արօր“ տպարանի
ԳԻՆԸ 70 ԿՈՊ.
Ծախվում է Թիֆլիսում, Տէր-Սարգսեանի խանութում, Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Խիդդեկէլի գրավաճառանոցում: (№ 137) 2—6

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104
Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թւին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիօնի ցուցահանդէսներում

Առաջարկում է նոր պատրաստած
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ

„Капризъ“	25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“	10 հատը 5 կոպ.
„Театральныя“	
„Флора“	
„Экономныя“	10 հատը 3 կոպ.

Կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ:
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է: (№ 104) 0—24



Ա. ԿՈՊՊԻ
ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ
(Միքայէլեան փողոց, № 132)
կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 ռուբլուց մինչև 450 ռուբլի արժողութեամբ:
(№ 119) 13—25

Ազգիս վեհափառ Հայրապետը հրամայել է գործածել հայկական դպրոցներում, որպէս ձեռնարկ Սարգիս քահանայ Բէգնազարեանցի աշխատասիրած

„ՀԱՄԱՌՕՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔԸ“:

Յայտնելով այս ի գիտութիւն դպրոցական վարչութեանց՝ խնդրում ենք ցանկացողներին առ այժմ դիմել ուղղակի այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Ելիզաւէտեան փողոց, տուն № 45, աշխատասիրողի այրին:

Գիրքը կազմած է և արժէ՝ 1) հատով գնողներին 60 կ., 2) տասնից մինչև յիսուն գնողներին 55 կ., 3) յիսունից մինչև հարիւր գնողին 50 կ., 4) դպրոցական վարչութիւնից վկայված չքաւոր աշակերտներն ու աշակերտուհիները կարող են վճարել 40 կ.: ճանապարհածախսը գնողների վրա է:
(№ 81)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարք ու կարգը ամենայաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման: Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով: Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ: կայ րեստօրան, տելեֆօն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ:

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 111—130 (շ.)

ՄԻՋՈՑ ԽԱՐԲՈՒԽԻ ԴԷՄ

„Ольфакторіумъ Нудилинъ“
М. Л. ЖИРМУНСКАГО.

բժշկական դեպարտամենտից թոյլատրված
ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ
Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ
Ծախվում է 40 կոպէկով
Դեղագործական Ապրանքների Վաճառման կովկասեան ընկերութեան մէջ Թիֆլիսում:
№ 128 (91 Թ.) 40—40

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Ноября 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.